ՀՀ ՆԳՆ փաստաթղթաշրջանառության
ապահովման վարչության պետ
Ս.Հովհաննիսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ ներքին գործերի նախարարության փաստաթղթաշրջանառության ապահովման վարչության փաստաթղթաշրջանառության ապահովման բաժնի փորձագետի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ**
**24.12.2025-05.05.2026թթ.**

2025 թվականի դեկտեմբերի 24-ից 2026 թվականի մայիսի 5-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ փաստաթղթաշրջանառության ապահովման վարչության փաստաթղթաշրջանառության ապահովման բաժնի փորձագետ՝ Աստղիկ Ռաֆիկի Հակոբյանիս կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. մասնակցել եմ պետական և այլ մարմիններից ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը հասցեագրված ոչ գաղտնի փաստաթղթերի (այսուհետ՝ փաստաթղթեր) հաշվառման և ըստ մակագրության համապատասխան հասցեատերերին առաքման աշխատանքներին,

2. հավաքագրել եմ գրություններով պահանջվող արխիվային փաստաթղթերի պատճեններն ու պատասխան գրությունները,

3. մասնակցել եմ գործավարության կարգի պահանջներին համապատասխան Նախարարությունից առաքվող և Նախարարություն մուտքագրվող փաստաթղթերի, նամակների և դիմումների փաստաթղթաշրջանառությանը,

4. մասնակցել եմ արխիվային փաստաթղթերի սահմանված կարգով պահպանման, օգտագործման, տրամադրման և փաստաթղթերի արխիվ հանձնման ու դրանց արխիվացման աշխատանքներին:

**ՀՀ ՆԳՆ ՓՇԱՎ փորձագետ** **Ա. Հակոբյան**
**« 05 » մայիսի 2026թ.**

**Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ «բավարար» :**

**ՀՀ ՆԳՆ ՓՇԱՎ**
**փաստաթղթաշրջանառության**
**ապահովման բաժնի պետ** **Ռ.Շահվերդյան**

**« 12 » մայիսի 2026թ.**